ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ՍՈՒՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ԽՍՀՄ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ. ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2023**

Ատենախոսության թեման հաստատվել է
ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում

Գիտական ղեկավար՝
**պ.գ.թ., դոցենտ Մխիթար Ռազմիկի Գաբրիելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
**պ.գ.դ. Հարություն Տիրանի Մարության**
**պ.գ.թ. Արտակ Արտաշի Դաբաղյան**

Առաջատար կազմակերպություն՝
**Հայաստանի պատմության թանգարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. նոյեմբերի 16-ին, ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 007 «Հնագիտության և ազգագրության» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ք. Երևան, 0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. հոկտեմբերի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ.գ.թ. **Արսեն Էդուարդի Հարությունյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** ԽՍՀՄ փլուզումը և ՀՀ անկախացումը, ուղեկցվելով ղարաբաղյան շարժման ծավալմամբ, կանխորոշեցին նորանկախ հանրապետության պատմաքաղաքական ընթացքի հետագա բովանդակությունը: Հայաստանի վերջին, ավելի քան երեք տասնամյակի ներքաղաքական և արտաքին քաղաքական զարգացումները դժվար է պատկերացնել առանց ղարաբաղյան հիմնահարցի:

Այս հանգամանքն առավել արդիական է դարձնում խորհրդային ազգային-պետական քաղաքականության ուսումնասիրությունը: Ղարաբաղյան հակամարտությունն իր ներկա էթնոքաղաքական կերպով հետևանք է ԽՍՀՄ փլուզման, ինչպես նաև՝ կայսերական անցյալի բազմաշերտ ազդեցությունների, իսկ ադրբեջանցիների դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի կորստով պայմանավորված՝ ինքնության կառուցակերպի փլուզման: Ուստի և ղարաբաղյան հիմնահարցի ազգաբանական ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատելու, որ դրանում կայուն կերպով առկա են մտավոր-գաղափարական, ինստիտուցիոնալ, տարածքային խորհրդային կաղապարներ: Խորհրդային ազգային-պետական քաղաքականության գիտական քննությունը հնարավորություն կընձեռի լրացնել ղարաբաղյան հիմնահարցի, հայ-ադրբեջանական փոխհարաբերություններին վերաբերող դաշտի մի փոքր մասը:

**Ատենախոսության նպատակը և խնդիրները**: Ատենախոսության նպատակն է ներկայացնել խորհրդային ազգային-պետական քաղաքականությունը, դրա ազդեցությամբ՝ կերպափոխումները ղարաբաղյան հիմնահարցում: Նպատակ ունենք ներկայացնել խորհրդային քաղաքականության ազգային-պետական դրսևորումները, զուգահեռաբար քննաբար ներկայացնել հայ-ադրբեջանական փոխհարաբերությունների սոցիալ-տնտեսական, էթնոմշակութային ընթացքն ու կերպափոխությունները, արցախյան շարժման արդի փուլի ազգաբանական քննումը, մտայնությունների փոփոխություններն այդ փուլում և դրանում խորհրդային ազդեցությունը:

Նպատակի իրականացման համար անհրաժեշտ է հետևյալ խնդիրների լուծումը.

- Համակարգել, ի մի բերել ԽՍՀՄ ազգային-պետական քաղաքականության և ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ հսկայածավալ գրականությունը:
- Քննական վերլուծության ենթարկել ցարական կայսրության ազգային, տարածքային ու սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, բոլշևիկյան կուսակցության՝ ազգային հարցի վերաբերյալ

մոտեցումները, գործնականում դրա կիրառումը և ազդեցությունները հակամարտությունների, մասնավորապես ղարաբաղյան հիմնահարցի նկատմամբ:

- Բացահայտել խորհրդային ազգային քաղաքականության ներքին մեխանիզմները, տրամաբանությունն ու այդ քաղաքականության տարբեր փուլերի հիմնական առանձնահատկություններն ու կերպափոխման հիմնապատճառները:

- Քննության ենթարկել խորհրդային կուսակցական-պետական քաղաքականության դրսևորումներն առանձին տարածաշրջաններում, մասնավորապես մեր տարածաշրջանում:

- Նկարագրել ու վերլուծել հայերի ու կովկասյան թաթարների, այնուհետ խորհրդային շրջանում հայ-ադրբեջանական միջէթնիկ հարաբերությունների սոցիալ-տնտեսական, էթնոմշակութային առումները:

- Հետամտել այդ հարաբերությունների զարգացման հիմնական փուլերի զարգացմանը, կերպափոխումներին ու վերջինիս առումով խորհրդային քաղաքականության ազդեցություններին:

- Քննական վերլուծության ենթարկել ղարաբաղյան հիմնահարցի նորօրյա ծավալումը՝ Արցախյան շարժումը, ընդգծել դրանում խորհրդային ազգային-պետական քաղաքականության ունեցած դերակատարությունը:

**Ժամանակագրական ընդգրկումը:** Ժամանակագրորեն ատենախոսությունն ընդգրկում է XIX դարի կեսերից մինչև XX դարի 90-ական թթ. սկիզբը, թեև ատենախոսության և վերնագրի թելադրմամբ սևեռման հիմնական ժամանակահատվածը խորհրդային ժամանակաշրջանն է:

**Գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:** Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ այն առաջին ամբողջական ազգաբանական ուսումնասիրությունն է՝ նվիրված ռուսական-խորհրդային ազգային քաղաքականությանը և վերջինիս համապատկերում ղարաբաղյան հիմնահարցի դիտարկմանն ու քննմանը, ընդհանրությունների ու առանձնահատկությունների վերհանմանը: Թեպետ աշխատանքը բաղկացած է իմաստային ծանրաբեռնվածության առումով երկու մեծ բաժիններից, սակայն այն ներկայացված է համակարգված ու երկու բաժինների ներքին իմաստակառուցվածքաբանական առանձնահատկությունների ներհյուսմամբ: Ատենախոսությունում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում մեր կողմից գրառված դաշտային ազգագրական նյութերը, ինչպես նաև ազգագրագետներ Ա. Դաբաղյանի և Մ. Գաբրիելյանի անձնական արխիվների անմշակ որոշ դաշտային ազգագրական նյութեր:

Ատենախոսության արդյունքները կարող են գործնականում կիրառվել հետևյալ նպատակներով.

ա. Խորհրդային պետական, ազգային քաղաքականությամբ, ղարաբաղյան հիմնահարցով զբաղվող հետազոտողները կարող են օգտագործել ներկայացված տեղեկությունները և՛ տեսական քննումներ կատարելիս, և՛ ազգաբանական ու քաղաքագիտական տարբեր բուհական դասընթացներում՝ ազգային պետական քաղաքականության ու կոնֆլիկտների էթնոսոցիալական ու էթնոքաղաքական առանձնահատկություններն ուսումնասիրելիս:

բ. Պետական համապատասխան գերատեսչությունների կողմից՝ խնդրո առարկա թեմայի հետ ուղղակի կամ անուղղակի առնչվող հիմնահարցերի հետ առնչակցվելիս:

**Աղբյուրագիտական հենքը և ուսումնասիրվածության աստիճանը:** Խնդրո առարկա թեմայի վերաբերյալ առկա է ստվարածավալ գրականություն: Նորանվաճ տարածաշրջաններում ցարական կառավարության քաղաքականության լուսաբանման առումով կարևոր սկզբնաղբյուր է «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր» հավաքածուն (Акты, собранные Кавказской археографической комиссией-АКАК): Լեռնային Ղարաբաղում, հատկապես Շուշիում հայերի և կովկասյան թաթարների ժողովրդագրական համամասնության, հայերի և կովկասյան թաթարների տնտեսական զբաղմունքների ուսումնասիրության առումով կարևոր սկզբնաղբյուր է «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК) հավաքածուն:

Ցարական կայսրության քաղաքականության ընդհանուր ուրվագծերին, Այսրկովկասում տարվող սոցիալական, ագրարային, պետական քաղաքականության քննությանն են նվիրված Բ. Միրոնովի, Ջ. Հոսքինգի, Ն. Սմիռնովի,Ջ. Օլսոնի, Ալ. Մանասյանի, Ս. Ալեքսանյանի, Վ. Դիլոյանի, Խ. Ավդալբեկյանի, աշխատությունները:

Ազգային հարցի ու ազգային քաղաքականության վերաբերյալ մինչհեղափոխական բոլշևիկների ընկալումների ուսումնասիրության առումով սկզբնաղբյուրային նշանակություն ունեն Վ. Լենինի և Ի. Ստալինի աշխատությունները, որոնցում, թեպետ, առանձին հատորներ, գրքեր ազգային քաղաքականության ու ազգային հարցերի մասին չկան, այնուամենայնիվ, այդ խնդրի վերաբերյալ տարբեր հատորներում տեղ գտած արծարծումները բավական արժեքավոր են:

Խնդրո առարկա ժամանակահատվածի բոլշևիկյան ընկալումների ու քաղաքականության վերաբերյալ բավական արժեքավոր է Ֆ. Սիլնիցկու մենագրությունը: Դա ակներև է հարցերի ընդգրկման ժամանակագրական սահմանների առումով՝ 1917-1922 թթ.:

Խորհրդային ազգային-պետական քաղաքականությանը նվիրված առանձին աշխատանք հայ իրականության մեջ չկա: Այս տեսանկյունից առաձնանում է հայ-ադրբեջանական սահմանային խնդիրներին նվիրված Կ. Խաչատրյանի, Գ. Բաղալյանի և Հ. Սուքիասյանի աշխատությունը: Այս հանգամանքի թելադրմամբ՝ տվյալ հիմնախնդրի հետազոտման համար կարևոր են հիմնականում ռուսաստանյան և արևմտյան հեղինակների աշխատանքները (Ի. Գլեբով, Վ. Ձիձոև, Վ. Զոտով, Յ. Բաբերովսկի, Թ. Մարտին, Թ. Սվենտոխովսկի, Շ. Ֆիցպատրիկ, Դ. Բրանդենբերգեր և այլք:

Խորհրդային շրջանում ԼՂԻՄ զարգացման միտումները, Հայաստանին վերամիավորվելու համար տարվող պայքարի լուսաբանումը, ԼՂԻՄ-ում իրականացվող Խորհրդային Ադրբեջանի քաղաքականությունը ընկալելու առումով կարևոր են Բ. Ուլուբաբյանի, Վ. Բալայանի, Կ. Խաչատրյանի, Ս. Մելքումյանի, Բ. Միրզոյանի, Հ. Աբրահամյանի, Հ. Ազատյանի աշխատանքները:

Ղարաբաղյան շարժումը, դրա տիպաբանությունն արդի կոնֆլիկտաբանական համատեքստում պատկերացնելու, «Մենք» ու «Նրանք»-ի էթնոմշակութային առանձնահատկությունները հայերի ու ադրբեջանցիների միջավայրում հասկանալու համար, ինչպես նաև այսպես կոչված «մրցակցող պատմության» հիմնահարցի վերլուծությանը օգնել են հայ, ադրբեջանցի, ռուսաստանյան և արևմտյան մի շարք հեղինակների ուսումնասիրություններ (Ալ. Մանասյան, Ա. Արշակյան, Հ. Մարության, Տ. Հակոբյան, Լ. Աբրահամյան, Մ. Սարգսյան, Ստ. Աստուրյան, Ի. Ալիև, Մ. Մարջանլի, Բ. Նաջաֆով, Զ. Բունյաթով, Գ. Շլեե, Յ. Բրեմեր, Վ.Շնիրելման, Լ. Մորինա և այլք):

Աշխատանքի շարադրանքում մեծապես կարևորվում է նաև դաշտային ազգագրական նյութերի առկայությունը, որոնք գրառվել են 2008-2014 թթ. Արարատի մարզի Զանգակատուն համայնքում: Համայնքի ընտրությունը պայմանավորված է Ադրբեջանի Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ անմիջական սահմանակցությամբ: Խորհրդային շրջանում համայնքը սերտ շփումներ է ունեցել Նախիջևանի ադրբեջանական բնակչության հետ, ինչը դիտարկելի է դարձրել հայ-ադրբեջանական փոխշփումների առտնին մակարդակը: Նյութերի գրառումը կատարվել է մեր կողմից կազմված հարցարանով, որում հատկապես ուշադրության կենտրոնում է առնված հայերի և ադրբեջանցիների առօրյա տնտեսական փոխշփումների բնույթը, ադրբեջանցիների ընկալումները, ազգամիջյան հարաբերությունները:

Մեծապես երախտապարտ ենք ազգագրագետներ Արտակ Դաբաղյանին և Մխիթար Գաբրիելյանին, որոնք սիրով տրամադրեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրենց գրառած դաշտային ազգագրական անմշակ որոշ նյութեր: Դրանք գրառվել են

1996 թ., երբ հասանելի էին նաև Շարժմանն անմիջապես մասնակցած ու որոշ դեպքերում ղեկավար դիրքերում եղած անձինք:

**Ատենախոսության մեթոդաբանությունը:** Ատենախոսությունը գրելու ընթացքում կիրառվել են ազգագրական և պատմագիտական մեթոդներ: Կարևոր է պատմահամեմատական մեթոդի կիրառությունը, որի օգտագործումը հնարավորություն է տալիս առավել ընդհանրական համապատկերից ստանալ կոնկրետ քաղաքականության տարաժամանակյա ընդհանրությունները, ստանալ ազգային պետական քաղաքականության զարգացումների առանձնահատկությունների պատկերը տարբեր պատմափուլերում:

Նկատի առնելով ատենախոսության նպատակը, խնդիրները՝ կարևորվել են միջգիտակարգային մոտեցումները: Կիրառվել է քաղաքական մարդաբանության, կոնֆլիկտաբանության, պատմագիտության, հետազոտական գործիքակազմը: Նման մեթոդաբանության կիրարկումն արդարացված է ատենախոսության թեմատիկ առանձնահատկություններով:

Հատուկ կազմված և ղեկավարի հետ համաձայնեցված հարցարանի միջոցով կատարվել են դաշտային ազգագրական հետազոտություններ Արարատի մարզի Զանգակատուն բնակավայրում խորհրդային շրջանում Նախիջևանի ադրբեջանցիների հետ շարունակական շփումներ ունեցած անձանց հետ:

**Ուսումնասիրության փորձաքննությունը:** Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի խորհրդում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթներն իրենց արտացոլումն են ստացել հեղինակի թվով յոթ գիտական հոդվածներում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ամփոփ ներկայացված են ատենախոսության ընդհանուր բնութագիրը, թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, ժամանակագրական ընդգրկումը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, աշխատանքի մեթոդաբանությունը, աղբյուրագիտական հիմքը և թեմայի ուսումնասիրության աստիճանը:

## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ
## ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱԶԳԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ատենախոսության առաջին գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

**1.1 Ընդհանուր տեսական մոտեցումներ**: Ներկայացվում են ազգերին ու ազգայնականությանը նվիրված հիմնական տեսական մոտեցումները, որոնք կիրառելի են Արցախյան հիմնախնդրի ուսումնասիրության պարագայում: Ազգերի և ազգայնականության մասին տեսությունների քննական վերլուծությունը թույլ է տալիս համընդգրկուն ըմբռնել ԽՍՀՄ ազգային քաղաքականության հիմնական առանձնահատկությունները, դրանց փոխակերպման պատճառները և հետևանքները: Խորհրդային ազգային քաղաքականության փոխակերպումներն իրենց մեջ ներառում էին նաև Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Հարցերի այս համախմբի քննարկումը մեր կողմից կատարվել է հստակ նպատակադրությամբ՝ ազգերի ու ազգայնականության հարցերի տեսական քննությամբ ներքին տեսաբանական հիմք ու տրամաբանություն ապահովել ատենախոսության հետագա շարադրանքում արծարծվող հիմնախնդիրների համար:

**1.2 Ազգային-պետական քաղաքականություն:** Բազմազգ պետական կազմավորումներում միջէթնիկ հարաբերությունները սովորաբար բաժանվում են երկու տեսակի՝ ուղղահայաց հարաբերություններ՝ աստիճանակարգային՝ տիրապետողի և ենթակայի հարաբերություններ, և հորիզոնական հարաբերություններ: Ռուսական կայսրության կառուցակազմի տրամաբանությունը թելադրում էր ուղղահայաց հարաբերություններ: Նորանվաճ երկրամասերում հիմնական երկու սկզբունք էր առկա՝ պետականություն ունեցող ժողովուրդների հետ կնքվում էր պայմանագիր, սակայն, դա անցումային ակտ էր, քանզի որոշ ժամանակ անց վերացվում էր պետականության ինստիտուտները և տվյալ սուբյեկտը դառնում էր կայսրության վարչատարածքային միավոր, իսկ պետականություն չունեցող ժողովուրդները պարզապես ներառվում էին կայսրության կազմում:

## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ
## ՑԱՐԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ 1917 թ.

Ատենախոսական աշխատանքի երկրորդ գլխում անդրադարձ է կատարվել Ռուսական կայսրության քաղաքականությանը կովկասյան տարածաշրջանում, մասնավորապես՝ Այսրկովկասում: Ներկայացվել է հայերի և կովկասյան թաթարների հարաբերությունները XIX դարում և XX դարի 1-ին տասնամյակում: Անդրադարձ է կատարվել ազգային հարցի և ազգային քաղաքականության վերաբերյալ մինչհեղափոխական շրջանի ռուսական սոցիալ-դեմոկրատիայի և բոլշևիկների ընկալումներին: Աշխատանքի երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

**2.1. Վարչական բաժանումները Արևելյան Հայաստանում և հայ-թյուրքական/ կովկասյան թաթարական հարաբերությունները XIX դարում և XX դարի 1-ին տասնամյակում:** Առաջին ենթագլխում ներկայացված է Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմ ընդգրկվելուց հետո վարչաքաղաքական իրավիճակը, ժողովրդագրական նկարագիրը: Ռուսական կայսրությունը Այսրկովկասում վարում էր քաղաքականություն, որն ավելի շատ ուշադրություն էր դարձնում նորանվաճ երկրամասերում կրոնական բաղադրիչին, քան էթնիկությանը: Այսրկովկասում Ռուսական կայսրության ազգային քաղաքականությունը հանգեցրեց կովկասյան թաթարների մոտ ազգային ինքնագիտակցության ի հայտ գալուն: Հայկական տարրի հետ առկա դիմակայության բացահայտ դրսևորումը 1905-1907 թթ. հայ-թաթարական բախումներն էին: Դրա պատճառների շարքում կարելի է նշել և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ մշակութային, և՛ վերջապես, որոշ չափով, նաև կրոնական պատճառները: Այս փուլի կարևոր առանձնահատկությունը նրանումն էր, որ հայերի և թաթարների կոնֆլիկտը զուրկ էր ինստիտուցիոնալիզացիայից, քանի որ երկու ժողովուրդներն էլ չունեին պետականություն:

**2.2. Ազգային հարցը մինչհեղափոխական ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի և բոլշևիկյան ընկալումներում:** Երկրորդ ենթագլխում նկարագրված է մինչհեղափոխական ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի ընկալումներն ազգային հարցի վերաբերյալ: Ազգային հարցի դերը սոցիալ-դեմոկրատիայի մոտեցումներում երկրորդական դեր չի ունեցել: Դեռևս XX դարի սկզբին նոր կազմավորվող սոցիալ-դեմոկրատիայի ընդերքում ստեղծվում էին Ռուսական կայսրությունում ապրող ժողովուրդների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները: Բոլշևիկների՝ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունից հեռանալու գործում ազգային հարցի վերաբերյալ մոտեցումները դեր են խաղացել: Բոլշևիները ցանկանում էին ստեղծել համակայսերական կենտրոնացված սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, ինչը չընդունվեց: Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ մինչև 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը բոլշևիկներն չունեին հստակ

մշակված մոտեցումներ և ծրագիր ազգային հարցում: Ազգային հարցին բոլշևիներն անդրադառնում էին այնքանով, որքանով այն ծառայելու էր պրոլետարիատի շահերին: Ազգերի ինքնորոշման հարցի վերաբերյալ բոլշևիների կարևոր թեզիսներից էր այն, որ բոլշևիկները հոգում են ոչ թե ազգերի ինքնորոշման մասին, այլ պրոլետարիատի՝ յուրաքանչյուր ժողովրդի մեջ: Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին բոլշևիկների մոտեցումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ենթարկվում էր իրավիճակային մեկնաբանությունների: Երբեմն ինքնորոշման իրավունքը մեկնաբանվում էր ինքնորոշում՝ կոնկրետ պետության սահմաններում, իսկ երբեմն էլ՝ Ստալինի մեկնությամբ՝ ինքնորոշման իրավունքը պետք է ծառայի սոցիալիզմի համար պայքարում որպես միջոց: Ազգերի ինքնորոշման վերաբերյալ բոլշևիկների նման ընկալումների և մոտեցումների հետևանքը եղավ Ղարաբաղյան շարժման պրոցեսում Մոսկվայի գործողությունները և կոնֆլիկտի հետագա ծավալումը և կերպափոխումները:

## ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ
## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երրորդ գլխում ուշադրության կենտրոնում են խորհրդային ազգային քաղաքականությունը և ԼՂԻՄ զարգացման հիմնական միտումները: Ներկայացվում են ԽՍՀՄ կազմավորման առանձնահատկությունները, խորհրդային ազգային քաղաքականության դրսևորումները, որոնց կերպափոխությունները որոշակիորեն ի ցույց են դնում հետհեղափոխական առաջին շրջանի ժառանգությունից հրաժարումը և, այդուհետ, դարձ ի շրջանս յուր՝ դեպի ռուսական կայսերական արժեքների ու գաղափարաբանական հիմնամիտումների ռեաբիլիտացիա: Այս գլուխը, թերևս, ծավալային ու իմաստային ծանրաբեռնվածության առումով ամենաընդարձակն ու տարողունակն է, ինչը հիմնավորվում է քննարկված հարցերի շրջանակով:

**3.1 ԽՍՀՄ ազգային քաղաքականության հիմնական դրույթները:** Առաջին ենթագլխում ներկայացված են ազգային միավորների նկատմամբ խորհրդային պետական քաղաքականության մոտեցումները, և այդ քաղաքականության համապատկերում ԼՂԻՄ զարգացման հիմնական միտումները: Խորհրդային ազգային քաղաքականության առավել նշանակալից շրջադարձերից մեկը կորենիզացիայի քաղաքականությունն էր, որն իր բովանդակությամբ ցուցադրում էր ազգերի վերաբերյալ բոլշևիկյան ընկալումները և գործնական քաղաքականությունը: Կորենիզացիայի քաղաքականությունն իրականացվում էր չորս այնպիսի բնագավառներում, որոնք կենսականորեն կարևոր էին ազգակերտման (nationbuilding) գործընթացում՝ ազգային լեզվի

ձևավորում, ազգային տարածք,ազգային էլիտաներ, ազգային մշակույթի կազմավորում: Այս քաղաքականությունը հանգուցային դեր խաղաց ադրբեջանական ազգակերտման պրոցեսում: Կորենիզացիայի քաղաքականության իրականացումն ընթանում էր անհավասարաչափ տարբեր տարրածաշրջաններում, այսրկովկասյան իրողությունների դիտարկումները ակնհայտ են դարձնում Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի դեպքում որոշակի բարեհաճ վերաբերմունքը վերջինիս նկատմամբ, որը պայմանավորված էր և՛ տնտեսական գործոնի առկայությամբ, և՛ այն փաստով, որ ադրբեջանցիները դասվել էին «մշակութապես հետամնաց» ԽՍՀՄ ազգությունների շարքում, ինչը ենթադրում էր առանձնահատուկ վերաբերմունք: Եվ Լեռնային Ղարաբաղի հարցը ենթարկվում էր ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների և Ադրբեջանի միջև առկա ընդհանուր շահերի և փոխադարձ հետաքրքրությունների փոխակերպումների տրամաբանությանը:

**3.2 ԼՂԻՄ կազմավորումը և սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացումը:** Երկրորդ ենթագլխում ներկայացված է Լեռնային Ղարաբաղի՝ ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի հուլիսի 5-ի նիստում հանձնումը Ադրբեջանին, ԼՂԻՄ-ի կազմավորումը, ինքնավարության ստեղծումից հետո մարզի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումը: Այն, ինչ անում էր Ադրբեջանը, ըստ էության, ազգ կայացնելուն ուղղված գործողությունների շարք էր, և այդ գործողությունները իրենց տրամաբանությամբ կարող էին հակասել միմյանց: Հորօրինակ, 1920-ական թթ. Ադրբեջանն առաջ մղեց տնտեսական գործոնը Լեռնային Ղարաբաղի պատկանելության հարցը վճռելիս, իսկ 1930-ականներին, երբ այն արդեն ինքնավարության կարգավիճակով ընդգրկված էր Ադր. ԽՍՀ կազմում, առաջին պլան մղվեց էթնիկությունը, որի վրա շեշտադրում էր կատարում խորհրդային ազգային քաղաքականությունը: Եթե մոսկովյան Կենտրոնը վերադառնում էր մեծառուսականությանը, ապա որոշ չափով պետք է թույլատրեր պայմանական ասած՝ «մեծահայկականությունը», «մեծավրացականությունը», «մեծահյուսիսկովկասականությունը», տեղերում հրատարակել էպոսներ և այլն: Այս շարքում Ադրբեջանը կորչում էր, քանզի վերջինիս պատմությունը բացակայում էր, առկա չէր այդ հիմքը: Կենտրոնի թույլտվությամբ ստեղծվեց այդ հիմքը, որն ադրբեջանցիներին թույլ էր տալու դիրքավորվել հայերի և վրացիների հետ կողք կողքի: Ազգի կայացման համատեքստում կարևոր էր նյութական ու հոգևոր մշակույթի դերը, ուստի և տեղի ունեցավ իրանական մշակութային շերտի ադրբեջանականացում, օրինակ՝ Նիզամիի «ադրբեջանականացումը», Լեռնային Ղարաբաղի տարածքում առկա հուշարձանների «աղվանականացումը», քանզի, ինչպես կտեսնենք հաջորդիվ, ադրբե-

ջանական իշխանություններն իրենց հռչակելու էին աղվանների հետնորդներ: Զուգահեռ «ստեղծվում» էր նյութական և հոգևոր մշակույթ: Ղարաբաղյան հակամարտությունը մարդաբանական տեսանկյունից դիտարկելով՝ տեսանելի է դառնում, որ աստիճանաբար սահմանափակվում էր ԼՂԻՄ-ի մշակութային արեալային ընդգրկումը, և նյութական ու հոգևոր մշակույթի յուրացման այդպիսի տեմպերը, բացառված չէ, որ հանգեցնեին նրան, որ արցախահայությունն էլ Խորհրդային Ադրբեջանի կողմից հռչակվեր հայացված աղվաններ:

**3.3 «Մենք»-ը և «Նրանք»-ը հայ-ադրբեջանական հարաբերություններում. ազգաբանական առումներ:** Երրորդ ենթագլխում դաշտային ազգագրական նյութերի և այլ աղբյուրների քննությամբ ներկայացվում են հայ-ադրբեջանական միջէթնիկ հարաբերությունների ընդհանուր համապատկերն ու առանձնահատկությունները, ադրբեջանցիների ընկալումները հայերի շրջանում և բանավոր պատմական հիշողությունները նրանց մասին և որոշակի կարծրատիպեր: Խորհրդային գաղափարախոսության տիրապետության պայմաններում հայ-ադրբեջանական հարաբերությունները թեպետ բացահայտ լարվածության մակարդակի չէին աճում, այնուամենայնիվ, ներքին լարվածությունն առկա էր:

**3.4 Էթնոքաղաքական ինքնության փնտրտուքներն Ադրբեջանում:** Չորրորդ ենթագլխում քննարկվել են էթնոքաղաքական ինքնության ադրբեջանական փնտրտուքները, էթնոգենեզի տարբեր տեսությունների հերթափոխը: Խորհրդային քաղաքականության վերաձևակերպումների հետ համընթաց կատարվում էր ադրբեջանական ինքնութենականության համատեքստում ինքնանույնականացում տարբեր էթնիկական սկիզբների հետ, որն էլ իր հերթին, վերախմբագրման էր ենթարկում ԼՂԻՄ նկատմամբ տարվող ադրբեջանական պետական քաղաքականությունը:

## ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ
## ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Չորրորդ գլխում ներկայացվում է արցախյան նորօրյա շարժումը, ծավալման հիմնական առանձնահատկությունները, փորձ է արվում տիպաբանել Ղարաբաղյան հակամարտությունը արդի կոնֆլիկտաբանության մոտեցումներով: Ցույց է տրվել, որ խորհրդային ազգային քաղաքականությունը ոչ միայն ծնել է Ղարաբաղյան հակամարտությունը, այլև ձևավորել է հետագայի տրանսֆորմացիաները:

**4.1 Տեսական մեթոդաբանական դասակարգումներ:** Առաջին ենթագլխում ներկայացվել է Ադրբեջանի քաղաքականության անընդ-

հատականությունը՝ սկսած խորհրդային ժամանակաշրջանից մինչև այժմ: Քաղաքական մարդաբանության և կոնֆլիկտաբանության տեսական մոտեցումների քննմամբ ցույց է տրվել, որ Ղարաբաղյան կոնֆլիկտը չի սկսել 1988 թ. արցախյան շարժմամբ: Կոնֆլիկտաբանական մեթոդաբանության կիրառմամբ այն դասակարգելի է ըստ լատենտ կոնֆլիկտների (նախա-ԲԿԳ), բացահայտ կոնֆլիկտային գործընթացների (ԲԿԳ), և բացահայտ ագրեսիվ կոնֆլիկտային գործընթացների (ԲԱԿԳ) տիպերի:

**4.2 Արցախյան խնդիրն արդի աշխարհաքաղաքական զարգացումներում:** Երկրորդ ենթագլխում ներկայացված են արցախյան հիմնախնդրի կերպափոխումների ընթացքը: Դիտարկումները թույլ են տալիս ասել, որ հետխորհրդային շրջանի Ադրբեջանը քաղաքականության հիմնական ուրվագծերով Խորհրդային Ադրբեջանի ժառանգորդն է՝ աննշան շեղումներով: Ժողովրդագրական և վարչական պատկերի միջոցով ներկայացվում է ներկայումս Ադրբեջանի քաղաքականության և խոսույթի տրամաբանությունը: Ադրբեջանական քաղաքականությունը, ըստ էության, 1920-ական թվականներից մինչև օրս աննշան շեղումներով, կրել և կրում է շարունակական բնույթ: Եվ 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի քաղաքական և ակադեմիական խոսույթը խորհրդային շրջանից շարունակվող ընդհանուր շղթայի մի օղակն է: Ղարաբաղյան հիմնահարցը հարավկովկասյան տարածաշրջանում աշխարհաքաղաքական վերափոխումների անկյունաքարերից է, որտեղ իրենց մասնակցությունն են ունենում և՛ Արևմուտքը, և՛ ՌԴ-ն: Հատկապես 2020 թ. պատերազմից հետո Հարավային Կովկասը միջազգային հարաբերություններում աստիճանաբար դադարում է ընկալվել որպես հետխորհրդային տարածք: Առկա մոտեցումները ցույց են տալիս, որ փոխվում է կոնֆիգուրացիան, անգամ դիտարկվում է, որ Հարավային Կովկասը կարող է դառնալ մերձավորարևելյան տարածաշրջանի մի մասնիկը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԽՍՀՄ մոդելը տեղայնացվեց որոշ միութենական հանրապետությունների դեպքում: Խրհրդային Վրաստանը և Խորհրդային Ադրբեջանն իրենց կազմում ազգային-տարածքային ինքնավարություններ ունեցող բազմէթնիկ պետություններ էին: Վրաստանի և Ադրբեջանի դեպքում ԽՍՀՄ մոդելը կիրառելը դարձավ հետխորհրդային ժամանակափուլում այսրկովկասյան տարածաշրջանում ծավալված հակամարտությունների պատճառներից մեկը, քանզի վարչաքաղաքականորեն էապես տարբեր չափումներ ու ծավալներ ունեցող կազմավորումների

նկատմամբ միևնույն սկզբունքի կիրառումը հղի է բարդ հետևանքներով:

2. Ադրբեջանական ինքնութենականության համատեքստում ինքնանույնականացումը տարբեր էթնիկական սկիզբների հետ պայմանավորված է եղել խորհրդային քաղաքական իրողությունների վայրիվերումներով: Մինչև 1930-ական թթ. ադրբեջանական գիտաքաղաքական հարթություններում տիրապետող էր ադրբեջանական էթնոգենեզի «թյուրքական» հայեցակարգը: Դա պայմանավորված էր 1920-ական թթ. թյուրքական-մահմեդական հանրույթներին տրված արտոնություններով, ինչպես նաև այն դերակատարմամբ, որը սկզբնական շրջանում հատկացնում էին Թուրքիային՝ հեղափոխությունը Արևելք արտահանելու իրենց ծրագրերում:
3. Ազգի վերաբերյալ պրիմորդիալիստական մոտեցումները խորհրդային իրականությունում թույլ տվեց ադրբեջանցիներին որդեգրել իրենց էթնոգենեզի «աղվանական»-«ալբանական» հայեցակարգը, այսինքն՝ ցույց տալ ադրբեջանական էթնոսի դեռևս վաղնջական ժամանակներից բնիկությունը Արևելյան Այսրկովկասում: Լեռնային Ղարաբաղի նկատմամբ տարվող քաղաքականությամբ Ադրբեջանը լուծում էր մի քանի խնդիրներ: Դրանով փորձում էր համապատասխանել ազգի պրիմորդիալ ըմբռնմանը, միևնույն ժամանակ Լեռնային Ղարաբաղը և հայերի հետ լարված հարաբերություններն օգտագործել ազգակերտման գործընթացներում: Ադրբեջանցիների դեպքում ազգային ինքնագիտակցությունը և պետության ստեղծումը համընկնում են իրար կամ առաջինը հաջորդում է երկրորդ գործոնին: Այդ գործընթացում անհրաժեշտ են որոշակի հենարան-գործոններ, ինչպես օրինակ հայկական գործոնը, որի վրա հենվում է ադրբեջանական ազգակերտման գաղափարաբանությունը:
4. Եթե նկատի ունենանք, որ 1918-1920 թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը չհասցրեց որևէ նշանակալի դեր խաղալ Արևելյան Այսրկովկասի թյուրք-թաթարների ազգաքաղաքական իրողությունների վերջնական կայացման առումով, և պետական ինստիտուտները, որպես այդպիսին, կազմավորվեցին Խորհրդային Ադրբեջանի գոյության ժամանակաշրջանում, ապա պետք է պարզ լինի, որ խորհրդային ղեկավարությունը պետք է փորձեր ադրբեջանցիների էթնիկ ինքնության ձևավորման հիմքում ներդնել հայկական գործոնի մշտական ներկայության և վերջինիս հետ շարունակական մրցակցության իրողությունը: Սա կայսերական մտայնության՝ գործնականում դրսևորման վառ նմուշ է:
5. Բոլշևիկների կայսերական գործունեությունն առավել նկատելի է դրսևորվում Այսրկովկասի քարտեզն ուսումնասիրելիս և հայ-ադրբեջանական սահմանազատման դեպքում: Ստեղծվել է արհեստա-

կանորեն հայկական «անկլավ»՝ ի դեմս ԼՂԻՄ-ի: Այսպիսով, խորհրդային իշխանությունը ստեղծում էր էթնիկական և վարչական զանազան անկլավներ՝ անհրաժեշտության դեպքում լարվածություն հրահրելու և այդ համատեքստում ապահովելու սեփական վերահսկողությունը:

6. Խորհրդային շրջանում ադրբեջանցիների դեպքում տեղի էր ունենում էթնիկության «տարածքայնացում», որից էլ բխում է հայկական տարածքների նկատմամբ ադրբեջանական նկրտումները, և այդ տարածքների դերը ադրբեջանական ինքնությունում:
7. Խորհրդային շրջանում էթնիկությունը գերագնահատվեց, գաղափարայնացվեց, պատմականացվեց: Դա արվում էր բոլոր տարածաշրջանները և ծագող կոնֆլիկտները կանխատեսելի դարձնելու միտումով: Անհատը դարձավ օբյեկտ, իսկ բոլշևիկների հիմնական թիրախը խումբն էր: Ղարաբաղյան հիմնախնդիրն իր քաղաքական, սոցիալ-տնտեսական, պատմական-գաղափարաբանական հարթություններից զատ, տիրապետում է նոր իրողության՝ այն անձի, անհատի ազատ ինքնորոշման, սեփական քաղաքացիական իրավունքները իրացնելու լավագույն դրսևորումներից է, երբ միջազգային իրավունքին ու խորհրդային օրենսդրությանը լիովին համապատասխան հռչակվեց անկախություն, ստեղծվեց պետություն՝ վերջինիս բնութագրիչ բոլոր ինստիտուտներով:
8. Խորհրդային Միությունում էթնիկության հիպերբոլիզացիային զուգահեռ՝ քաղաքականացվեց և տարածքայնացման ենթարկվեց այն: Թվում է՝ բազմէթնիկ հանրապետություններում շեշտադրությունը էթնիկությանը պետք է օգտավետ լիներ այդտեղ բնակվող էթնիկ փոքրամասնությունների համար, սակայն, հակված ենք կարծելու, որ դա արվում էր էթնոազգային ինքնագիտակցությունն ակտիվացնելու և շեշտադրելու նպատակամղմամբ, որպեսզի Մոսկովյան կենտրոնն անհրաժեշտ պահին իրար հակադրեր դրանք կրող էթնիկ հանրություններին: Դա արդյունք էր էթնիկության տարածաքաղաքականացման խորհրդային քաղաքականության:
9. Աշխատանքում Ղարաբաղյան հիմնախնդիրը դիտարկվում է մարդու և քաղաքացու իրավունքների համատեքստում: Կոնֆլիկտը հնարավոր է կարգավորել նշված իրավունքների կիրարկմամբ: Միջազգային հարթակում այդ հասկացությունների առաջադրումը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կապակցությամբ անվիճարկելի է դարձնում հիմնախնդրի՝ լուծման այդ ուղղությամբ ընթացքի օրինականությունը և իրավունակությունը:
10. Հայ-ադրբեջանական 1918-1920 թթ. լարված հարաբերություններից հետո խորհրդային իշխանությունը կարող էր լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը, սակայն այն գիտակցաբար խեղվեց՝ Արցախը

Խորհրդային Ադրբեջանին հանձնելով, այսինքն՝ բոլշևիկները գնացին այդ քայլին՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև ստեղծելով լարվածության կայուն օջախ՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի՝ դարձնելով այն զսպաշապիկ մեկը մյուսի համար:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ


1. **Խաչատրյան Ա.,** «Ազգ» հասկացության սոցիալ-մարդաբանական ընկալման առումների շուրջ, «Պատմություն և մշակույթ», Երևան, 2012, թ. 3, էջ 264-270:
2. **Խաչատրյան Ա.,** ԽՍՀՄ ազգային քաղաքականության տնտեսական հիմնավորումները (Լեռնային Ղարաբաղի օրինակով), «Պատմություն և մշակույթ», Երևան, 2013, թ. 1, էջ 184-192:
3. **Խաչատրյան Ա.,** Բոլշևիկյան կուսակցության մոտեցումները ազգային հարցին նախախորհրդային շրջանում, «Պատմություն և մշակույթ», Երևան, 2020, թ. 2, էջ 134-141:
4. **Խաչատրյան Ա.,** Պաշտոնականն ու առօրեականը հայ-ադրբեջանական հարաբերություններում խորհրդային շրջանում (Արցախի օրինակով), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2020, թ. 3 (660), էջ 242-252:
5. **Խաչատրյան Ա.,** Ադրբեջանցիների էթնոգենեզիսի փնտրտուքները և մշակութային քաղաքականությունը ԼՂԻՄ-ում, «Պատմություն և մշակույթ», Երևան, 2021, թ. 1, էջ 148-155:
6. **Խաչատրյան Ա.,** Արցախյան խնդիրն արդի աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումներում, «Պատմություն և մշակույթ», Երևան, 2022, թ. 1, էջ 207-216:
7. **Խաչատրյան Ա.,** Ռուսական կայսրության ազգային քաղաքականության հիմնական ուղենիշները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2023, թ. 2 (668), էջ 25-30:


## АРТАК СУРИКОВИЧ ХАЧАТРЯН НАЦИОНАЛЬНАЯ ПОЛИТИКА СССР И КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ: ЭТНОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.04 «Этнография»

Защита диссертации состоится 16-го ноября 2023 г., в 14:00 на заседании специализированного совета по Археологии и этнографии 007 ВАК РА при Институте археологии и этнографии НАН РА
(0025, г. Ереван, ул. Чаренца 15)

## РЕЗЮМЕ

Цель данной диссертации заключается в представлении советской политики по национальном вопросе, выявлении ее проявлений в армяно-азербайджанских отношениях, а также в рассмотрении причин и последствий данной политики в контексте карабахского конфликта.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, списка использованной литературы, приложения. Первая глава подразделяется на две подглавы, а вторая глава также состоит из двух подглав. Третья глава далее расширяется на четыре подглавы, а четвертая глава также подразделяется на две подглавы.

Во введении кратко изложены общая характеристика диссертации, ее актуальность, цели и задачи исследования, научная новизна, практическая значимость и методология, дается общая характеристика источниковой базы, анализируется степень изученности темы.

Первая глава, под названием "Арцахский конфликт в контексте теоретических подходов к нациям и национализму", вводит и рассматривает основные теоретические подходы, связанные с национальностью и национализмом, которые имеют отношение к изучению карабахской проблемы.

Во второй главе, "Царская политика и представления о национальном до 1917 года", анализируется политика Российской империи в Кавказском регионе, с акцентом на Южном Кавказе. Обсуждается административно-политическое деление региона, а также рассматривается динамика отношений между армянами, кавказскими татарами и другими народами в XIX веке и в начале XX века. В данной главе также рассматриваются взгляды дореволюционной российской социал-демократии и большевиков на национальные вопросы и политику с целью выявления общей логики основ большевистской национальной политики после их прихода к власти.

Третья глава, "Советская национальная политика", освещает подходы советского государства к вопросам национальности и изучает основные направления развития Нагорного Карабаха в контексте этих подходов.

В четвертой главе, "Арцахский конфликт в контексте современной антропологии конфликтов", анализируется современное движение в Арцахе, его ключевые аспекты развития, и предпринимается попытка классификации карабахского конфликта с использованием подходов современной теории конфликтов. В главе подчеркивается, что советская национальная политика не только способствовала возникновению карабахского конфликта, но и оказала определяющее влияние на последующие трансформации.

Заключение подводит итоги диссертации.

**ARTAK SURIK KHACHATRYAN**

# NATIONAL POLICY OF THE USSR AND THE KARABAKH CONFLICT: ETHNOLOGICAL RESEARCH

Dissertation for the degree of candidate of sciences in History, with specialization of “Ethnography” 07.00.04
The defense of the dissertation will be held at 14:00, on November 16th of 2023 at the session of the Specialized Council 007 on Archaeology and Ethnography of SCC of RA by the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA (0025,Yerevan,15Charents str.)

## SUMMARY

The purpose of this dissertation is to present the Soviet policy on the national issue, highlighting its manifestations within Armenian-Azerbaijani relations and the reasons and effects of that policy in the Karabakh conflict.

The dissertation consists of an introduction, followed by four chapters. The first chapter is divided into two subchapters, the second one is also divided into two subchapters. The third chapter has four subchapters, and the last chapter is subdivided into two subchapters as well. The dissertation concludes with a concluding section and includes appendix.

The introduction presents a compact overview of the dissertation, relevance of the topic, the aim and objectives of the study, chronological coverage, scientific innovation and practical significance, the methodology of the work, the source-scientific basis and the degree of study of the topic.

The first chapter, which is entitled "The Artsakh Problem in the Context of Theoretical Approaches to Nations and Nationalism," introduces and explores the principal theoretical frameworks related to nations and nationalism that are applicable to the examination of the Karabakh issue.

The second chapter, which is entitled " The Politics of Tsarism and National perceptions until 1917" presents the Russian Empire's policies in the Caucasus region, particularly in the South Caucasus. It discusses the administrative and political divisions of the Russian Empire in the region, as well as the dynamics of Armenian-Caucasian-Tatar relations during the 19th century and the first decade of the 20th century. Furthermore, the chapter includes the perceptions of the pre-revolutionary Russian social-democracy and the Bolsheviks regarding the national question and national policy, in order to find out the general logic of the foundations of the Bolshevik national policy after coming to power.

In the third chapter, which is entitled "Soviet National Policy", the main subject of attention is the Soviet national policy and the main trends in the development of Nagorno Karabakh autonomous oblast.

The chapter highlights the approaches of the Soviet state policy towards national units and in the context of this policy the main tendencies of Nagorno Karabakh autonomous oblast development.

The fourth chapter, which is entitled "The Artsakh Conflict in the Context of Modern Conflict Anthropology," explores the contemporary Artsakh movement, its key developmental aspects, an attempt was made to typify the Karabakh conflict with the approaches of modern conflict theory. The chapter highlights how the Soviet national policy not only contributed to the emergence of the Karabakh conflict but also played a defining role in shaping subsequent transformations.

The results of the dissertation have been summarized in the conclusion.